ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

75

Գործնական որհուրդներ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Չտեսնող կամ տեսողության խանգարում-ներ ունեցող երեխաները, ինչպես և բոլորը, ԿԱՐՈՂ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ, իսկ դասավանդել նրանց նշանակում է՝ **օգնել նրանց հասնել իրենց ամենամեծ ներուժին**:

Շնորհակալություն Ձեզ այս մեծ մարտահրավերն ընդունելու պատրաստակա-մության համար:

1. ԴԱՍԱՐԱՆ

Անհրաժեշտ է ունենալ լավ կազմակերպված դասարան, որը զերծ է տեսողական և ֆիզիկա-կան խառնաշփոթությունից: Խուսափեք ավելորդ կահույքից, նյութերից և սարքավորումներից, բայց մի գնացեք ծայրահեղությունների: Դասա-վորեք կահույքն այնպես, որպեսզի տեսողության խանգարումներ ունեցող սովորողը կարողանա հանգիստ տեղաշարժվել դասարանում: Դասա-րանում եղած նյութերը թողեք իրենց տեղերում: Սա կհեշտացնի տեսողության խանգարումներ ունեցող սովորողի համար անհրաժեշտ նյութերը գտնելու գործընթացը: Սև գրատախտակին գրե-լիս օգտագործեք սպիտակ կավիճ և համարձակ գծեր կամ, եթե օգտագործում եք whiteboad, ճիշտ կլինեն սև կամ մուգ գույնի մարկերները: Նաև համոզվեք, որ այն, ինչ գրում եք գրատախտակի վրա ուղեկցում եք բանավոր խոսքով, բացա-տությամբ: Նյութը տպագիր ներկայացնելիս օգտագործեք հեշտ ընթերցվող տառատեսակ՝ առանց ավելորդ ձևավորումների (օրինակ՝ Arial տառատեսակը) և 16 կամ ավելի մեծ տառաչափ՝ կախված երեխայի խնդրից: Բառերի շեշտա-դրման համար օգտագործեք **bold** ռեժիմը: Խուսափեք Italic կամ Underline տարբերակներն օգտագործելուց:



2. ՃԻՇՏ ՆՍՏԵԼԸ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է

Կարևոր է հասկանալ, թե որտեղ է գտնվում սովորողի համար լավագույն տեսողական դաշտը և որն է նրա համար իդեալական դիրքը դասարանում: Օրինակ, եթե սովորողը

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP

օգտագոր-ծում է միայն ձախ աչքը, ապա կարևոր է, որ նա նստի դասարանի աջ կողմում, պատուհաններից հեռու: Իդեալական տարբերակն այն է, որ լույսը ընկնի նրա վերևից կամ մի փոքր հետնամասից: Եթե սովորողը օգտագործում է էլեկտրական խոշորացույց կամ այլ էլեկտրական սարքեր, ապա կարևոր է, որ նա նստի վարդակի մոտ: Սովորողը պետք է նստի այնտեղ, որտեղից նա կարող է ավելի պարզ տեսնել գրատախտակը և ավելի լավ լսել ուսուցչի բանավոր հրահանգները (ճշտել հենց երեխայից): Նստեցրեք տեսողության խան-գարումներ ունեցող սովորողին այլ սովորողների հետ, ովքեր կարող են աջակցել կամ օգնել նրան:

3. ԸՆԿԵՐԸ՝ ՈՒՂԵԿԻՑ

Տեսողության խանգարումներ ունեցող սովորողի դասընկերները կարող են ուղեկցել իրենց ընկերոջը դպրոցի ներսում կամ դպրոցից դուրս: Տեսողության խնդիր ունեցող երեխային ուղեկցելիս պետք է քայլել նրա կողքով՝ նրանից կես քայլ առաջ, որպեսզի չհրի և վտանգի չենթարկի նրան: Ավելի ճիշտ կլինի թույլ տալ, որ նա բռնի իրեն ուղեկցողի ձեռքը, եթե նրան օգնություն է պետք:

4. ԴԻՄԵՔ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Դիմելով տեսողության խանգարումներ ունեցող երեխային՝ ասեք նրա անունը: Այդ կերպ նրանք կիմանան, որ Դուք նրանց հետ եք խոսում, այլ ոչ թե մեկ ուրիշի: Միջանցքով անցնելիս՝ «Ողջո՛ւյն» ասելով՝ ասեք նաև Ձեր անունը, քանի որ տեսողության խնդիրներ ունեցողները գուցե չկարո-ղանան ճանաչել դեմքերը: Օրինակ՝ «Ողջո՛ւյն, Նարե, տիկին Ավետյանն է, այսօր ինչպե՞ս ես:»: Հորդորեք դասընկերներին վարվել նույն կերպ:

5. ԱՄԵՆ ԻՆՉ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՎՈՐ

Խուսափեք ուղղություններ ցույց տվող ժեստերից, քանի որ տեսողության խանգարումներ ունեցող սովորողները չեն կարող տեսնել այն, ինչ Դուք մատնանշում եք: Խուսափեք «այստեղ», «այնտեղ», «նրա նման», բառերից և նման արտահայտություն-ներից: Օգտագործեք տեղը և ուղղությունը ցույց տվող բառեր, ինչպես օրինակ՝ «վերևից», «ներքևից», «առջևից», «հետևից», «աջից», «ձախից» և այլն:

6. ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Սա աշխատանք է միայն նվիրյալների համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում Ձեր աջակցության և լրացուցիչ աշխատանքի համար::

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: